



ԹՀՍԶԷՐ ԶՄԷ ԹՀՍԾԶՐԻ ՆՕՒՍՈՍ  
 ԷՅԵՆՈ ՅԶԾՂ  
 ԹՀԷՉԻ ԶԾԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՀՍԶԷՐ ԶՄԶ ԹՀՄՆՅ ԶՄԻ ՆՕՒՍՅ ԷՅԵՆՈ ՍՅՈՒՇ  
 ԹՀԷՅԻՅՈՆ ՆՅՍՅՍՅՆՆ, ՆՅԵՕ» Խ. ԹՀԷՅԻՅՈՆ

Հ.Բ. ԳԵՐԻ [halavar.lori@mta.gov.am](mailto:halavar.lori@mta.gov.am)

ՄՇԻ 22/18

Տ12՝ փետրվարի 2018Յ.

*ԹՀՍԶԷՐ ԶՄԶ ԹՀՄՆՅ ԶՄԻ ՆՕՒՍՅ  
 ԷՅԵՆՈ ՍՅՈՒՇՅՄԻ ԶՅՈՒՅՄՅՄ*

*2. ՍՅԷՄՅ ՄՍՅ ՄՇԻ*

*ԹՀՈ. ՄԷՇ ԶՅՈՒՅՄ ՍՅԷՄՅ ՄՍՅ ՄՇԻ.*

Ձեզ է ուղարկվում Հալավար համայնքի ավագանու թիվ 01-Ն, 02-Ա և համայնքի  
 ղեկավարի թիվ 02-Ա որոշումները:

ԹՀԷՅԻՅՈՆ

ՆՅՍՅՍՅՆ ՕՄԻՅԻՅՈՆ

Ե. ԹՀԻՅՄՅ ՄՍՅ ՄՇԻ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ  
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար, հեռ. 093344183  
էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

05 փետրվարի 2018 թվականի N 01-Ն

**ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3 ենթակետով՝ Հալավար համայնքի ավագանին որոշում է.

1. Հալավար համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 15-ի «Հալավար համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 19-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն թիվ 2-6 հատվածների/հավելված/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
Աբազյան Գոհար Երվանդի	—	—	
Բաբայան Վահրամ Շահվալադի	<i>[Signature]</i>		
Մարտիրոսյան Նինա Լևոնի	<i>[Signature]</i>		
Հակոբջանյան Լաուրա Սարգսի	<i>[Signature]</i>		
Մաթևոսյան Արթուր Արայիկի	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ



Ս. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հավելված

Հալավար համայնքի ավագանու

05.02.2018թ. N 01-Ն որոշման

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ՝ 6299.150 հազ. /վեց միլիոն երկու հարյուր ինսուսնինը հազար հարյուր հիսուն/ դրամ

Ծախսեր՝ 6852.852 հազ. /վեց միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր հիսուներկու / դրամ

Տարեկան ազատ մնացորդ՝ 553.702 հազ. /հինգ հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր երկու/ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱԿԱՐ



ՄԱՐԳԻՍ ՀԱԿՈՒԲԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ  
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար, հեռ. 093344183  
էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

05 փետրվարի 2018 թվականի N 02-Ա

**ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ>>**

**ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 42-րդ հոդվածով Հալավար համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հալավար համայնքի 2018 թվականի <<Տարեկան աշխատանքային պլանը>> ըստ հավելվածի:

<b>Համայնքի ավագանու անդամներ</b>	<b>Կողմ(5)</b>	<b>Դեմ(0)</b>	<b>Ձեռնպահ(0)</b>
<b>Աբաղյան Գոհար Երվանդի</b>	—	—	
<b>Բաբայան Վահրամ Շահվալադի</b>	<i>[Signature]</i>		
<b>Մարտիրոսյան Նինա Լևոնի</b>	<i>[Signature]</i>		
<b>Հակոբջանյան Լաուրա Սարգսի</b>	<i>[Signature]</i>		
<b>Մաթևոսյան Արթուր Արայիկի</b>	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

*[Signature]*  
  
**Ս. ՀԱՎՈՒՋԱՆՅԱՆ**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ՀԱԼԱՎԱՐ համայնքի  
2018 թվականի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար

**ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԸ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018թ.-ի փետրվարի 05—ի  
թիվ 02-Ն որոշմամբ

**ՀԱԼԱՎԱՐ 2018թ.**

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱԿՆԵՐԸ-----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	13
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	16
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	18

## Ներածություն

Հալավար համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

**ՏԱՊ** – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

**ՏԱՊ-ի 1-ին բաժնում** ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8)** ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

### 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 27-Ն որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ համայնքի զարգացման տեսլականն է՝ ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով: Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքն է, իսկ թիրախային արժեքը՝ 2018 թվականին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

**ՏԱՊ**-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 – ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	44.44	48
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	169	179
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	0.12	0,11
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	0/0	1/2

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները**

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի`		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	44.44	48
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
Աջակցել բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը	համայնքի բնակչության և երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակի բարձրացում	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
Բարձրացնել արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման մաշխատանքների որակը	Բնակիչների պաշտպանությունը բնական աղետներից և անվտանգ կյանքի ապահովում	Միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			



<p>Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում քաղաքաշինական նոր գաղափարներին և ծրագրերին աջակցությունից (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
<p>Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>	
<p><b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b></p>			
<p>Բարձրացնել միջհամայնքային և ներհամայնքային ենթակայության ճանապարհների շահագործման և պահպանման ծառայությունների որակը, և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Համայնքային ենթակայության ճանապարհների շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
<p><b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 8. Կրթություն</b></p>			
<p>Աջակցել համայնքի բնակչությանը կրթություն ստանալու հարևան համայնքների նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական հաստատություններում, համայնք ներգրավել ոչ ֆորմալ կրթություն առաջարկող միջազգային կառույցներին:</p>	<p>ՏԻՄ-ի, գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը(հարցումներ ի հիման վրա)</p>	<p>Բավականին լավ</p>	<p>լավ</p>
<p><b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b></p>	<p>Համագործակցություն և մասնակցություն հարևան համայնքներում կազմակերպվող մշակութային և երիտասարդական միջոցառումներին,</p>	<p>Բավականին լավ</p>	<p>լավ</p>

<p><b>Աջակցել տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների անցկացմանը:</b>  <b>Միջհամայնքային համագործակցություն:</b></p>	<p>համայնքում մշակույթային կյանքի զարգացում, երիտասարդների ներգրավումը կազմակերպվող միջոցառումներին /միջոցառումների քանակը տարվա ընթացքում/</p>	<p>2</p>	<p>4</p>
<p><b>Ոլորտ 10. Առողջապահություն</b></p>			
<p><b>Աջակցել համայնքի բնակչությանը առողջական խնդիրների լուծման հարցում</b></p>	<p>սոցիալապես անապահով և առողջական խնդիրներ ունեցող խավի բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին ոչ լավ, ոչ վատ</p>
<p><b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b></p>			
<p>Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:</p>	<p>Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ</p>	<p>այո</p>	<p>այո</p>
	<p>Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին ոչ լավ, ոչ վատ</p>
<p><b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b></p>			
<p>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը, աջակցել չմշակվող վարելահողերի օգտագործման տրամադրելու գործընթացին, իրականացնել ոռոգման ցանցերի վերանորոգման և շահագործման աշխատանքներ</p>	<p>Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, %</p>	<p>4,89%</p>	<p>5%</p>
<p><b>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b></p>			

Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	Ավելի շատ վատ, քան լավ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
Համայնքային ժողովների, հանրային լուծումների միջոցով բնակիչների անմիջական ներգրավում համայնքային խնդիրների լուծմանը:	ՏԻՄ-ի գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	Ավելի շատ լավ, քան վատ	Միջին ոչ լավ, ոչ վատ

## 2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	5362,15	Ընդհանուր համայնքային
.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	280,0	
<b>Ընդամենը</b>		<b>5642,15</b>	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
.	Միջհամայնքային փողոցների բարեկարգում՝ փոսալցում և հարթեցում	440,0	
<b>Ընդամենը</b>		<b>440,0</b>	
<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>			
.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	140,0	
<b>Ընդամենը</b>		<b>140,0</b>	
<b>Ոլորտ 15. Այլ ծախսեր</b>			
.	Նվիրատվություններ ոչ կառավարական կազմակերպություններին	44,0	

	<b>Պահուստային միջոցներ</b>	<b>33,2</b>	
	<b>Ընդամենը</b>	<b>77,2</b>	
	<b>Այլ ծրագրեր՝ պահուստային ֆոնդ</b>	<b>553,7</b>	
	<b>Ընդհանուրը</b>	<b>6852,852</b>	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը Հալավար
<b>Ոլորտ 4. Բնակարանաշինություն</b>			
	Բնակչությունը կապահովվի բնակարաններով, կբարձրանա սոցիալ-տնտեսական մակարդակը, համայնքը կվերակառուցվի, կդառնա գեղեցիկ և բարեկեցիկ	580000,0	
	<b>Ընդամենը</b>	<b>580000,0</b>	
<b>Ոլորտ 6. Ճանապարհների բարեկարգում</b>			
	Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների շահագործում և պահպանում, անվտանգ երթևեկություն, սպառման շուկայի, մայրուղու, կրթական և բժշկական հաստատությունների հասանելիություն, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում:	7000,0	
	<b>Ընդամենը</b>	<b>7000,0</b>	
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում</b>			
	Պտղատու այգիները կմշակվեն, կբարձրանա այգիների բերքատվությունը, կստեղծվեն աշխատատեղեր, մրգի վերամշակման արտադրության շահագործում, մրգի իրացում, համայնքի և բնակչության եկամուտների շահութաբերության բարձրացում:	20300,0	
	<b>Ընդամենը</b>	<b>20300,0</b>	
	<b>Ընդհանուրը</b>	<b>607300,0</b>	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ .</b> Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից – ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում 44,44%			

**Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում**

<p><b>Ծրագրի նպատակ.</b> Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը – ավելի շատ լավ, քան վատ</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավականին լավ 2. ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը-2 3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անձնությունների նվազեցում - 3%-ով 4. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում-248 օր</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 5362,15 հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 4 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք  <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>				
<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b> Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ-5 %-ով 2. Հարկային պարտականությունները չկատարողների քանակի նվազեցում 3%-ով 3. Հողի հարկի բազայում առկա անձնությունների նվազեցում-3 %-ով</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ</p>	<p>2018թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>

	<p>4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով</p> <p>5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 5%-ով</p>				
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b></p> <p>1. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</p> <p>2. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 2</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է</p> <p>3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 597,4 հազ. դրամ</p>			
<p><b>Միջանկյալ արդյունք</b></p> <p>Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <p>1. Համայնքապետարանում իրականացվում է բնակիչների արագ և որակյալ սպասարկում</p> <p>2. Համայնքապետարան դիմած այցելուների թիվը -30</p> <p>3. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ</p> <p>4. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից դիմում-բողոքներ չկան</p> <p>5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը- շաբաթը 1 անգամ</p> <p>6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 3 օր</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մասնագետների առկայությունը</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b></p> <p>1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում</p> <p>2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում</p> <p>3. Համայնքի գույքի կառավարման բարելավում</p> <p>4. Աշխատակազմի աշխատողների աշխատանքային պայմանների բարելավում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <p>1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 2</p> <p>2. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2</p> <p>3. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -2</p> <p>4. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա չէ</p>			

**Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**

<p><b>Ծրագրի նպատակ.</b> Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Աձել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 2 %-ով</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական և այլն) համակարգերը բարելավվել են</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքներ չկան 3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 0 4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 0 5. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -2 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ – չկա 7. Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը -1 8. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 3. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում 4. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր <b>280,0</b> հազ. դրամ 2. Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական համակարգեր– առկա է 3. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն –առկա է <b>Ֆինանսավորման աղբյուրը</b>՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b> Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ֆինանսական ռեսուրսների և մասնագետների</p>

կարողությունները բարձրացել են	ծրագրերի թիվը – 0 3.Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -0	հաշվետվություններ			առկայությունը
<b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1.Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 2.Աշխատակազմի գույքի նորացում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> Ֆինանսական միջոցներ			
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>					
<b>Ոլորտային նպատակ .</b> Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ			
<b>Ծրագիր 1. Համայնքի փողոցների բարեկարգում</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Համայնքի փողոցները բարեկարգել, վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին - 100 %	<b>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ</b> կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունք</b> 1.Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Բարեկարգված փողոցների երկարությունը- 7 կմ 2. Բնակիչների կարծիքը բարեկարգված փողոցների վերաբերյալ – բավականին լավ 3. Ծրագրի իրականացման ժամկետը – 6 ամիս	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2018թ. մայիս – 2018թ. հոկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Կազմակերպել և վերահսկել շինարարական աշխատանքները, 2.Կազմել,քննարկել և հաստատել աշխատանքների կատարման ավարտական ակտը:		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1.Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 3.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ <b>440.0</b> հազ. դրամ, <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ			
<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>					
<b>Ոլորտային նպատակ.</b> Ապահովել սոցիալապես անապահով		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1.Սոցիալական ծրագրի առկայությունը,-այո			



ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:		2. Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից - միջին ոչ լավ, ոչ վատ			
<b>Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Բարելավել անապահով ընտանիքների հետ տարվող աշխատանքների որակը և հասցեականությունը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բարելավվել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը (հարցումներ հիման վրա) - բավականին լավ	<b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, համայնքի ղեկավարին կից սոցիալական հարցերով մշտական գործող հանձնաժողով	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը -6 2. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քանակը ներկայացրածների թիվը -6 3. Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը -2 4. Սոցիալական աջակցություն ստացած հարազատին կորցրած և նորածին երեխա ունեցող ընտանիքների թիվը -2/1 5. Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին - միջին ոչ լավ, ոչ վատ 6. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Համայնքի ղեկավար, աշխատակազմի սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողով, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, շահառուներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, սոցիալական հարցերով մշտական գործող հանձնաժողով	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսներն առկա են
<b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Սոցիալական աջակցության տրամադրման կարգի ընդունում ավագանու կողմից 2. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերում և սոցիալական հարցերով հանձնաժողովի եզրայացություն 3. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քննարկում և աջակցության տրամադրում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման ծախսեր՝ 140,0 հազ. դրամ, 2. Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող համայնքի ղեկավարին կից հանձնաժողով 1 <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ			

2. Համայնքային գույքի կառավարման 2018 թ. ծրագիրը

Աղյուսակ 6. Համայնքի գույքի կառավարման 2018թ. ծրագիրը

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն կամ Մակերիցում ծրագրում	Քառակուսի մետր / մակերեսը (հա)	Վիճակագրական կատեգորիա	Գույքի կատարման մեթոդ	Այլընտրանքային արժեք
1.	Համայնքապետարանի շենք	1 փող. 1	0.0008	լավ	Համայնքի կարիքներ	—
2.	Ճաշարանի շենք	1 փ 1/2	0.0075	լավ	Համայնքի կարիքներ	—
3.	Հանրակացարան	2 փ 1 փկղ	0.0003	անմխիթար	Համայնքի կարիքներ	—
4.	Գրասեղան	համայնքապետ արան	-	լավ	Համայնքի կարիքներ	—
5.	Համակարգիչ "Samsung"	համայնքապետ արան	-	լավ	Համայնքի կարիքներ	—
6.	Մետաղյա պահարան	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
7.	Զահ էլեկտրական	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
8.	Հեռուստահաղորդիչ - ավեհավաք	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
9.	Համակարգիչ "LG" մոնիտոր	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
10.	Պահարան/մեծ/	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
11.	Պահարան/փոքր/	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
12.	Սեղան աշխատանքային	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
13.	Սեղան համակարգչի	համայնքապետ արան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
14.	Սեղան ղեկավարի	համայնքապետ	—	լավ	Համայնքի	—

		տարան			կարիքներ	
15.	Փափուկ կահույք	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
16.	Բազմոց/մեծ/	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
17.	Բազմոց/փոքր/	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
18.	Կախիչ/մեծ/	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
19.	Կախիչ/փոքր/	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
20.	Համ. տպիչ 31 XEROX	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
21.	Ավտոմեքենա "NIVA 4x4"	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
22.	Սեղան	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
23.	Պահարան	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
24.	Աթոռ	համայնքապետարան	—	լավ	Համայնքի կարիքներ	—
25.	Վարելահող	Գ. Հալավար	37,36	միջին	Տրամադրում օգտագործման կամ օտարում	Տրված է վարձակալությանը 1,37 հա
26.	խոտհարք	Գ. Հալավար	791,11	միջին	Տրամադրում օգտագործման կամ օտարում	Տրված է վարձ 146,46 հա
27.	արոտ	Գ. Հալավար	1649,53	միջին	Տրամադրում օգտագործման	-
28.	Գյուղ. այլ	Գ. Հալավար	256,11	միջին	Ըստ անհրաժեշտության հողատեսքի փոփոխում բարձր հողատեսքի	-
29.	Բնակավայրերի հողեր	Գ. Հալավար	157,43	միջին	Օտարում կամ օգտագործում համայնքի կարիքների համար	Տարիների ընթացքում օտարված
30.	Արդյունաբերական	Գ. Հալավար	15,77	միջին	Տրամադրում օգտագործման	-

					կամ օտարում	
31.	Էներգետիկա	Գ. Հալավար	2,53	միջին	Տրամադրում օգտագործման կամ օտարում	-
32.	Հատուկ պահպանվող	Գ. Հալավար	2,4	միջին	Հուլարկավարությ ունենրի համար	—
33.	Անտառային	Գ. Հալավար	491,79	միջին	-	—
34.	Զրային	Գ. Հալավար	18,82	միջին	Օգտագործել որպես ջրանցք	—

**3. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը**  
**Աղյուսակ 7. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները				
			Համայնքի բյուջե	Պետական բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Համայնք-ՔՀ-ՄՀ ղրակագրություն	Այլ աղբյուրներ
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>							
	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	5362,15	5362,15				
	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	280,0	280,0				
<b>Ընդամենը</b>		<b>5642,15</b>	<b>5642,15</b>				
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-				
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-				
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>							
	Համայնքի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում, ոռոգման ցանցի նորոգում	-	-				

<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>							
	<b>Միջհամայնքային փողոցների բարելավում՝ փոսալցում և հարթեցում, հանդամիջյան ճանապարհներ</b>	440,0	440,0				
	<b>Ընդամենը</b>	<b>440,0</b>	<b>440,0</b>				
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>							
	<b>Համագործակցություն համայնքների միության, հիմնադրամների և ՀԿ-ների հետ</b>	77,2	77,2				
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>							
	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	140,0	140,0				
	<b>Ընդամենը</b>	<b>140,0</b>	<b>140,0</b>				
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>							
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
	<b>Այլ ծրագրեր՝ պահուստային ֆոնդ</b>	<b>553,7</b>	<b>553,7</b>				<b>-</b>
	<b>Ընդհանուրը</b>	<b>6852,852</b>	<b>6852,852</b>				

#### 4. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Ստորև ներկայացվում է ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

Աղյուսակ 8. Տեղեկատվություն համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրերի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ	4			
	Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր	1			
	Համայնքապետարանի վարչական շենք և գույք	ըստ գույքագրման ցուցակի			
	Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ	2			
	Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ	առկա է			
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ, հազ.դրամ	597,4			
	Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ	2			
	Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր	առկա չէ			
	Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ	2			
	Աշխատակազմում	0			

	տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ				
	ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր	2			
	Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայություն	առկա չէ			
<b>Ելքային (քանակական)</b>	ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը	1			
	Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %	3			
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ, %-ով	5			
	Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %-ով	3			
	Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %-ով	3			
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում, %-ով	5			
	Համայնքապետարանում բնակիչների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը	կիրառվում է			
	Սպասարկման կենտրոն դիմող այցելուների թիվը	10			
<b>Ելքային (որակական)</b>	ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ	Բավականին լավ			

	բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա)				
	ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ լավ, քան վատ			
	ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, %-ով	-			
<b>Ելքային (Ժամկետայնության)</b>	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, օր	248			
	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	3			
	Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը	շաբաթը 1 անգամ			
<b>Վերջնական արդյունքի</b>	Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը	ավելի շատ լավ, քան վատ			
<b>Ծախսեր, հազ. դրամ</b>	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	<b>6299,150</b>			



**Ոլորտ 1. Ընդհանուր**

**Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**

Արդյունքային ցուցանիշները		2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
<b>Մուտքային</b>	Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական և այլ համակարգեր	առկա է			
	Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն	առկա է			
	Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցներ	1			
<b>Ելքային (քանակական)</b>	ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում, %-ով	0			
	Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը	0			
	Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը	0			
	Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը	2			
	Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը	առկա է			
	ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը	0			
	Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը	0			
<b>Ելքային (որակական)</b>	Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր	առկա է			
	ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի	-			

	վերաբերյալ				
	Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը	1			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, %-ով	3			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	280,0			

<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>					
<b>Ծրագիր 1. Համայնքի փողոցների բարեկարգում</b>					
<b>Արդյունքային ցուցանիշները</b>		<b>2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան</b>			
<b>Տեսակը</b>	<b>Անվանումը</b>	<b>Թիրախ. արժեքը</b>	<b>Փաստ. արժեքը</b>	<b>Շեղումը</b>	<b>Մեկնաբանություն</b>
<b>Մուտքային</b>	Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ	2			
	Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր	0			
<b>Ելքային (քանակական)</b>	Ասֆալտապատված փողոցների մակերեսը, ք.մ	0			
	Բարեկարգված փողոցների երկարությունը, մետր	7000			
<b>Ելքային (որակական)</b>	Բնակիչների կարծիքը բարեկարգված փողոցների վերաբերյալ	Բավականին լավ			
<b>Ելքային (ժամկետայնության)</b>	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	6			
<b>Վերջնական արդյունքի</b>	Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների	100			

	Երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին, %				
<b>Ծախսեր, հազ. դրամ</b>	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	<b>440.0</b>			

<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>					
<b>Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին</b>					
<b>Արդյունքային ցուցանիշները</b>		<b>2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան</b>			
<b>Տեսակը</b>	<b>Անվանումը</b>	<b>Թիրախ. արժեքը</b>	<b>Փաստ. արժեքը</b>	<b>Շեղումը</b>	<b>Մեկնաբանություն</b>
<b>Մուտքային</b>	Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող համայնքի ղեկավարին կից հանձնաժողով	1			
	Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	6			
<b>Ելքային (քանակական)</b>	Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քանակը ներկայացրածների թիվը	6			
	Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը	2			
	Սոցիալական աջակցություն ստացած հարազատին կորցրած և նորածին երեխա ունեցող ընտանիքների թիվը	2/0			

<p><b>Ելքային (որակական)</b></p>	<p>Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>			
<p><b>Ելքային (ժամկետայնության)</b></p>	<p>Ծրագրի իրականացման ժամկետը, տարի</p>	<p>1</p>			
<p><b>Վերջնական արդյունքի</b></p>	<p>Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը (հարցումների հիման վրա)</p>	<p>Բավականին լավ</p>			
<p><b>Ծախսեր, հազ. դրամ</b></p>	<p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>	<p>140,0</p>			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ  
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար, հեռ. 093344183  
էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 փետրվարի 2018 թվականի N 02-Ա

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ  
ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և հաշվի առնելով Հալավար համայնքի ավագանու 2018թ.-ի փետրվարի 05-ի թիվ 01-Ն որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Հալավար համայնքի 2018թ.-ի բյուջեի՝ եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները համաձայն հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հալավար համայնքի ղեկավարի 2017թ.-ի դեկտեմբերի 15-ի «Հալավար համայնքի 2018թ.-ի բյուջեի եռամսյակային բախշումը հաստատելու մասին» N 22-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ